Երեւանը վայր էր ընկել Արարատի ստորոտին, ականջին խուլ չչոցներ տուող, մեռած խխունջի նման:

Աշնան դէմ ճահիճը շարժւում էր: Ընտանիքները պաշար էին պատրաստում: Ոչխար էին մորթում, դինիները տակառները ածում, չիր, զաւուրմա, սուճուխ և անուշ շինում: Գիւղացիները դալիս էին քաղաք, երկու նիհար հաւ ձեռքերնին. ցնցոտիների մէջ փաթթած մի քիչ կարագ կամ մի սայլ խոտ էին բերում եւ շուկայում կանգ առնում ժամերով: Խանութպանները մեծ գործունէութիւն էին ցոյց տալիս: Ոսկրուտ մատերով ոսկի դրամներ բռնում, գիւղացիներին խաբում, հաւերի փորը չօշափում. եւ փտած կտաւի փոխարէն չիր եւ կարագ տուն տանում:

Ու ամեռը լափումի եւ դժուար մարսողութիւնների շրջան էր:

Արարատեան դաշտի հուժկու դինին, կենդանացած այս մարմինների մէջ, ստամոքսների աղրի վրայ մի քիչ հայրենասիրական շոգի էր սրսկում: Ալքօլը ճարպի մէջ թաղուած ուղեղներում՝ ինչ ինչ թելերին արհեստական կեանք էր տալիս եւ չինծու ոգեւորութեան բոպէներին, հայ ազգը մեքենական խաղալիքների նման, օդի մէջ դարձնում էր իր անիւը եւ երկու քայլ վազելուց յետոյ, սեղանին կպչում եւ կանգ առնում:

Մարդիկ պառկում էին գոհ եւ միւս օրը խանութների մէջ յօրանջում:

* * *

Ռեժիմն էլ նպաստում էր հաւաքակի այս լինելութեան:

Հայ գաւառները պէտք չէին զարգանալ: Արդիւնաբերական ոչ մի ձեռնարկ: Հողերը ճահիճների տակ որդեր էին սնուցանում: Արմատները քարանում էին անապատների ծոցին: Ցարական գաւառապետը հսկում էր, նոր պահանջներին աքացի տալիս եւ դիակները շոյում:

Ռուսահայաստանում, Արարատից յետոյ, ամենամեծ երեւոյթը Շուստովի կոնեակի գործարանն էր: Մի ալքիմիա: Մի երազ, մի աղբիւր, ուր բոլոր հոգիները իրենց շորերն էին տանում: Պարծենում էին: Աշխարհի մէջ գըտնըւող գործարանների եօթներորդը իր մեծութեամբ:

Դեղնած փղոսկրի նման, արեւելեան սատափի գոյնով հեղուկը՝ հոգիներին լոյս էր տալիս եւ կենդանի տակառներին ոգեւորութիւն սրսկում:

Երբեմն, մօտաւոր սահմաններից արիւնի հոտ էր գալիս: Խանութպանները, սպանդանոցին մօտեցող տաւարի նման, ամենօրեայ լինելիութեան կածանի առջեւ կանգ էին առնում, գլուխը շարժում, պոչը վեր բարձրացընում եւ հայրենասիրական երգեր երգում:

Թրքահայաստանը մշուշապատ երազ էր: Վատ գրուած բանաստեղծական մի պատրանք, որին ոչ ոք չէր հաւատում, բայց պարտք էր համարում կեղծաւոր հառաչանքներով վերյիշել: Վանը, Մուշը, Էրզրումը մի տեսակ հարեր էին, որ մարդիկ ընդունում էին բարոյապէս շմեռնելու համար:

Ե, սակայն, դիակացումը ակներեւ էր:

Ռուսական դպրոց տեսած երիտասարդները եւ ծերութիւնները ամաչում էին հայերէն խօսել:

Հայ կեանքը եւ գրականութիւնը համարում էին ստորին:

Փոշիների մէջ թաւալուելով, քարշ էին գալիս այսպէս անուանուած «ռուսական մշակոյթի» ետեւից:

Հայ գիրքը գնում էին ողորմութեան համար:

Ու մեր բանաստեղծները, ճեմարանից դուրս վռնտուած կամ թեմական դպրոցը տեսած, կիսագիրթ ընթերցողների համար կեղծ ժողովրդական, միալար եւ պարզամիտ վէպ կամ ոտանաւոր էին մշակում եւ, ակումբներում լափող մեծահարուստների սեղանների շուրջը, ծեծուած շուների նման կուչ գալիս:

Արարատը գեղեցիկ էր, հայոց աշխարհը՝ դժբախտ:

* * *

Ու մի օր էլ, պատմութիւնը կատաղօրէն խառնեց իր էջերը:

Աստաֆեան փղոցը դանդաղօրէն մագըլցող ձիաքարշ տրամվայի անիւները քարերի հանդիպեցին: Մրրիկը ոռնաց: Ձիերը հազացին, ու Երեւանը առուների մէջ ընկաւ:

Լուսանկարիչի խանութում շարուած ըսպաների եւ չինովնիկների խմբերը (կիսահարբած, փորը դուրս նետուած դնդապետը, աննըշան դէմքերի շարանը, ծալապատիկ նստած են-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան